



# HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS 02138-2296 • TEL. (617) 354-0632 • FAX (617) 354-0631

REVEREND FATHER MAMPRE A. KOUZOUIAN  
Pastor

Յուլիս 30, 1994

Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամբան Առաջնորդ Հայոց Ամերիկայի նիւ Եորք.

Սիրելի Սրբգ.

Մեծագոյն Պոսթոնի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխականներէն Դանիէլ -Տէն- Տօրեան, որպէս Թեմական Խորհուրդի նախկին անդամ, ծանօթ է ձեզի: Ան, ի տղայ տիոց, սիրած ու նուիրուած է մեր Մայր Եկեղեցիին, անդամ-ակցած Եկեղեցապատկան զանազան կազմակերպութեանց եւ աւելի քան յիսուն -50- տարիներ, զիտակցութեամբ եւ զոնորութեամբ ծառայած է Հայոց Առաքելական Եկեղեցւոյ:

Հայոց Եկեղեցւոյ հանդէպ, իր զիտակցութիւնը ձեւաւորուած՝ եւ սէրը՝ աճած է, հանգուցեալ Տիրան Սրբգ.ի եւ Շնորհք Պատրիարքի շունչին տակ, երբ մին՝ իբրեւ Առաջնորդ եւ միւսը՝ որպէս իր Հոգեւոր Հովիւր՝ պաշտօնավարած են Թեմիս մէջ:

Պրն. Տօրեան, 1946 թուին, եղած է Ըրվինկթրն, Ն.Ճ.Ի -այժմ Լիվինկսթըն- Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շինութեան յանձնախումբի անդամ: Նոյն թուականին, եղած է վերոյիշեալ Եկեղեցւոյ Երիտասարդ արանց եւ կանանց Օժանդակ մարմնի հիմնադիր եւ Ա.ին ատենապետը:

1946-էն ի վեր, եղած է Ա.Հ.Ե.Ե.Կ.եան- Էյ.Սի.Ուայ.Օ.էյ.Ի- հիմնադիրներէն եւ ղեկավարներէն մին:

Պոսթոն փոխադրուելէն ի վեր, անդամակցած է Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ: Պաշտօնավարած է որպէս՝ ծխական Խորհուրդի անդամ: Վերջին տասնեւհինգ -15- տարիներուն՝ եղած է Թեմական Պատգամաւոր: Ընտրուած է ծխական Անդամական Ժողովներու Ատենապետ: Ութը -8- տարի պաշտօնավարած է որպէս Ամերիկահայոց Թեմական Խորհուրդի անդամ, եւ երկու -2- տարի ալ՝ իբրեւ Ատենապետ՝ տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովի:

Դանիէլ -Տէն- Տօրեան վաստակաշատ ծառայութիւն մատուցած է մեր Մայր Եկեղեցիին եւ Թեմիս, հետեւաբար՝ Մշակը արժանի է իր վարձքին:

Որպէս Թեմիս Առաջնորդ, կը խնդրենք ձեզմէ՝ բարեխօսել առ վեհափառ Հայրապետն Ամենայն Հայոց, Հայրապետական կոնդակաւ՝ եւ Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով պարգեւատրել Դանիէլ -Տէն- Տօրեանը:

Մնամ Յարգալից Զգացումներով

*M. Kouzouian*  
Մամբրէ Գոնյ. Գուլգուեան  
Հոգեւոր Հովիւ